

Ա.Շիրահազրույունի

УДК 551.432

Պ. Գ. ԳԱՎԹՅԱՆ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԵՏԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՊԱՏԿԵՐԻ ԿԱՊԸ
ՁԵՎԱՔԱՆԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ՀԵՏ

Ռելիեֆի և երկրաբանական կառուցվածքի, ձևաբանական կառույցների վերծանման համար հատկապես կարևոր նշանակություն ունի գետային ցանցի պատկերը: Գետային ցանցի զարգացմանը զուգընթաց տեղի է ունենում երկրի մակերևույթի մասնատում: Գետային հովիտների վիճակը, ջրհոսքի ուղղությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Այդպիսիք են տեղանքի հորստագրաբենային հատվածները, խզումնային գոնանները և լեռնային ապարների հարաբերական կայունությունը: Բոլոր այս գործոնները պայմանավորում են ցանցի կախվածությունը կառուցվածքային տարրերից:

Հայկական ՍՍՀ գետային համակարգերի ըստ գետային ցանցի պատկերի դասակարգման հարցերը լուսաբանված են մի շարք հետազոտողների կողմից [1—3]:

Հոդվածում առանձնացված են Հարավային Զանգեզուրի մի շարք տեղամասեր ըստ գետային ցանցի պատկերի և սրանց համապատասխան ձևաբանական կառուցվածքային տարրերի: Մեր կողմից որպես հիմք ընդունվել են հետևյալ հեղինակների դասակարգումները [1,3—6]:

Մեր հետազոտությունները հիմք են տալիս Հարավային Զանգեզուրում առանձնացնել գետային ցանցի պատկերի և սրանց համապատասխան ձևաբանական կառուցվածքային տարրերի հետևյալ տիպերը (տե՛ս աղյուսակ):

Հարավային Զանգեզուրի գետային ցանցի և երկրաբանական կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս նրանց ամուր կապը տեկտոնական կառույցների հետ:

Շրջանի ընդհանուր կառուցվածքային պլանը ձևավորվել է օլիգոցենի վերջում և հետագայում վերակառուցվել նորագույն տեկտոնական շարժումների շնորհիվ:

Մեղրի գետի աջակողմյան վտակների միջին հոսանքին բնորոշ է ճյուղավորված գետային ցանցը, որը Մեղրու սինկլինալային հովտում ստեղծում է գետային ցանցի կենտրոնաձիգ տիպ: Նույն բանը կարելի է ասել նաև Մեղրի գետի ձախակողմյան վտակների մասին, որոնք սկիզբ են առնում Մեղրու լեռնաշղթայից:


Քննարկվող շրջանում գետային ցանցի այսպիսի պատկեր են ստեղծել նաև Կալեր, Մեղրի, Շիրշկերտ գետահովիտների վերին հոսանքները: Այս տիպի առաջացման պատճառը միջլեռնային իջույթներն են:

№ ը/Կ	Գևտահոլտի ձևը	Ձևաբանակառուցվածքային տարրեր	Ձևաբանակառուցվածքային միավորներ
1.	Ճառագայթաձև կենտրոնախույս	գմբեթաձև բարձրացում	Խուստուփի զանգված, ճգնավորի զանգված
2.	զուգահեռ կենտրոնախույս	կամարաձև բարձրացում	Կապուտջուղի լեռնաբազուկ, Մեղրու լեռնաշղթա
3.	ուղղանկյուն կենտրոնախույս	բեկորային բարձրացում	Հարավային Ջանգեզուրի լեռնաշղթա, Բարգուշտի լեռների հարավային լանջեր
4.	կենտրոնածիփ	միջլեռնային իջույթ	Կալերի գետահովիտ, Վերին Մեղրու գետահովիտ, Շիշկերտի գետահովիտ, Ղափանի գոգավորություն
5.	փետրաձև	ձգված սինկլինալային իջույթ	Ողջու հովիտ, Ծավի հովիտ, Մեղրու գրաբեն, Նորաշենիկի հովիտ
6.	սանրաձև	միաթեք վերնետվածքային բարձրացում	Մեղրու լեռնաշղթայի հարավ-արև-վելյան լանջ

Խուստուփ և ճգնավոր լեռնագագաթներում հանդես է գալիս գետային ցանցի ճառագայթաձև կենտրոնախույս պատկերը, որի առաջացմանը նպաստել են գմբեթաձև բարձրացումները:

Բացի ճառագայթաձև կենտրոնախույսից հայտնի են նաև զուգահեռ կենտրոնախույսը և ուղղանկյուն կենտրոնախույսը: Առաջինի առաջացմանը մեծապես նպաստում են կամարաձև բարձրացումները, իսկ երկրորդին՝ բեկորայինները: Վերջինս գերազանցապես ընդգրկում է գետերի վերնագավառները, ուր պարզորոշ կերպով արտահայտված են տեկտոնական բեկորները: Առաջին տիպը քննարկվող շրջանում արտահայտված է Կապուտջուղի լեռնաբազուկում և Մեղրու լեռնաշղթայում: Ուղղանկյուն կենտրոնախույս տիպը արտահայտված է հարավային Ջանգեզուրի լեռնազանգվածում, Բարգուշտի լեռների հարավային լանջերին: Մեղրի գետի ստորին հոսանքին, Նորաշենիկի, Ծավի, Ողջու գետահովիտներին բնորոշ է գետային ցանցի փետրաձև պատկերը, ուր վտակներն իրար համարյա զուգահեռ միանում են գլխավոր գետին: Այս տիպը բացառապես ձևավորվում է ձգված իջույթներում: Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջին ձևավորվել է գետային ցանցի սանրաձև պատկեր, ինչպիսին բնորոշ է միաթեք կամ հորատաձև բարձրացման տեղամասերին: Այս դեպքում վտակները գլխավոր գետի մեջ են թափվում ուղիղ կամ սրան մոտ անկյան տակ:

Ձևաբանակառուցվածքային տարրերի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի նաև գետահովիտների ուղղության վերլուծությունը (կտրուկ շրջադարձեր, բեկվածքներ, գալարներ և այլն):



ՀԱՐԱՎԱՅԻՆ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԵՏԱՅԻՆ ՑԱՆՅԻ ՊԱՏԿԵՐԻ ԻՎ
ՉԵՎԱՐԱՆԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ՍԵՆՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ

1. Զգված սինկլինալներ-գետային ցանցի փետրածև պատկեր: 2. Միջլեռնային գոգավորություն-ցետային ցանցի կենտրոնածիզ պատկեր: 3. Գմբեթաձև բարձրացում-գետային ցանցի ճառագայթաձև կենտրոնախույս պատկեր: 4. Կամարածև բարձրացում-գետային ցանցի զուգահեռ կենտրոնախույս պատկեր: 5. Կամարաբլուրկային հորստածև բարձրացում-գետային ցանցի ուղղանկյուն կենտրոնախույս պատկեր: 6. Միաթեք բարձրացում-գետային ցանցի սանրածև պատկեր:

Մխեմատիկ քարտեզի վրա թվերով տրվում են ձևաբանակառուցվածքային տարրերը:

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1. Խուստուփի, 2. Ճգնավորի, 3. Մեղրու լեռնաշղթա, 4. Կապուտջուղի լեռնաբազուկ, 5. Հարավային Զանգեզուրի լեռնաշղթա: 6. Բարգուշատի լեռնաշղթա, 7. Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջեր:

ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 8. Ղափանի, 9. Շիշկերտի, 10. Կալերի հովիտ, 11. Վերին Մեղրու հովիտ, 12. Ստորին Մեղրու հովիտ, 13. Ողջու հովիտ, 14. Նորաշենիկի հովիտ, 15. Մազրա-Սավի հովիտ:

Այսպես, Գեղի գետի վերին հոսանքը իր բեկորագալարային տեսքով արտահայտում է Հյուսիսային Զանգեզուրի և Բարգուշատի կամարա-բեկորային բարձրացման սահմանը: Մեղրի գետի աջակողմյան վտակների վերին հոսանքները ցույց են տալիս Հարավային Զանգեզուրի բլուրկային բարձրացման սահմանը:

Ողջի և Գեղի գետերի միացման տեղամասում գոյացել է գետային ցանցի ձևկաձև պատկեր: Այսպիսի պատկեր առաջացել է նաև Որոտան գետի մոտ՝ Տաթև գյուղի մերձակայքում և Իլդրիմ գետակի ստորին հոսանքում: Սրանց միևնույն ուղղության վրա գտնվելը պատահական չէ և, ըստ երեվույթին, կապված է մերձմիջօրեականի ուղղություն ունեցող կոտրվածքա-

յին համակարգերի հետ և ցույց է տալիս ձևաբանական ու ցվածքային տարրերի հերթափոխը:

Այսպիսով, Հարավային Ջանգեզուրի գետային ցանցի պատկերի վերլուծությունը և գետային ցանցի առանձին տարրերի ուսումնասիրությունը թույլ են տալիս ընդգծել նրա կառուցվածքի մի շարք կարևոր հատկություններ:

Ա. Ամենից առաջ հովտային ցանցի ընդհանուր հատվածավորումը կապված է ձևաբանական կառուցվածքների հետերոգեն բնույթի և նորագույն տեկտոնական վերակառուցման հետ: Վերծանվում է, մասնավորապես, նրանց հարմարվածությունը խորը հովիտների և կտորվածքների ուղղությամբ:

Բ. Հովտագետային ցանցի կարևոր բնութագրական գիծ է նաև նրա հատուկ ստորաբաժանումը ըստ ցանցապատկերի և հովտի կառուցվածքի, որոնք որոշվում են ձևաբանական ու ցվածքային տիպերով:

Գ. Ոչ պակաս կարևոր է նաև հովիտների կառուցվածքային, լիթոլոգիական հատկանիշներով պայմանավորվածությունը: Իջույթներին բնորոշ է հովտային ցանցի կենտրոնաձիգ, կառուցվածքա-էրոզիոն լեռներին՝ կենտրոնախույս պատկերը: Այսպիսի օրինաչափությունները վկայում են այն մասին, որ այստեղ ընդհանուր առմամբ գետային ցանցն ու ռելիեֆը երիտասարդ են:

Ըստ գետային ցանցի պատկերի մեր կողմից Հարավային Ջանգեզուրում վերծանվեցին մի շարք ձևակառուցյուններ, որոնց մի մասը համընկնում է երկրաբանական կառուցյուններին:

Ի դեպ, սրանք վերծանվել են երկրաբանագեոմորֆոլոգիական մեթոդներով, ընդ որում որոշ մասը լուսաբանվում է առաջին անգամ (տես սխեմատիկ քարտեզ):

Այսպիսով, գետային ցանցի ուղղությունը և պատկերը որոշվում է առաջին հերթին ձևաբանական ու ցվածքային տարրերով և նրանց զարգացման պատմությամբ:

Այստեղից հետևում է, որ հովտագետային ցանցի վերլուծությունը մի քանի այլ մեթոդների հետ կարելի է օգտագործել որոշ կոնկրետ խնդիրների լուսաբանման համար:

Քարտեզագրության և հիդրոմետեորոլոգիայի ամբիոն

Ստացվել է 20.10.1988

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Геворкян Ф. С. Рисунок речной сети Арм. ССР и его значение для выявления морфоструктур.—В сб.: Матер. науч. сес., посвященной 25-летию АН Арм. ССР и 10-летию отдела географии, Ереван, 1968.
2. Зограбян Л. Н. Связь орографической расчлененности гор с морфоструктурой.—Изв. АН Арм. ССР, сер. Науки о Земле, 1972, № 5.
3. Гагинян Р. X. Связь рисунка речной сети Сев. Зангезура с морфоструктурными элементами.—Уч. зап. ЕГУ, 1983, № 2.
4. Троицкий В. А. Типы речной сети Европейской части СССР.—Вопр. географии, сб. 7. М., ОГИЗ. 1948.
5. Хиллс Б. Ш. Элементы структурной геологии. М.: Недра, 1967.
6. Коржув С. С. Изучение общего рисунка речной сети.—В кн.: Морфоструктурный анализ речной сети СССР. Изд-во Наука, 1979.

РЕЗЮМЕ

Выделяются участки с характерным рисунком Южного Зангезура и соответствующие им морфоструктуры, часть которых совпадает с геологическими структурами, выявленными геолого-геоморфологическими методами, а некоторые из них выделены и оконтурены впервые.

SUMMARY

Sections with a characteristic drawing of the river net of South Zangezur and their corresponding morphostructures are distinguished. Part of the sections coincides with geological structures exposed by the geo-morphological methods. Some of them are distinguished and outlined for the first time.